ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<17>> 03 2016թ. N: 40-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15 -Ի ԹԻՎ 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 9-րդ կետի 10-րդ ենթակետի դրույթով՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2016 թվականի մարտի 15 -ի թիվ 2 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկությանի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016թ. մարտի 17 ի
N 40 - Ա որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Գյումրի

15. 03. 2016 թ.

ԿԱՅԱՑԱԾ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ԻՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝	Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝	Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝	Խ. ԽՆՁՐՑՅԱՆԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝	Տ. ՂԱՐԻԲՅԱՆԻ
	Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
	Ա. ԱՆՏԻԿՅԱՆԻ
	Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

Հանձնաժողովի նիստին մասնակցել է <<Երդելեք>>, <<Մանթաշի Հովիտ>> և <<Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2016 թվականի մարտի 11-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2016 թվականի մարտի 11-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

Զեկուցողը նշեց, որ 2016 թվականի մարտի 11-ին կայացել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային թվով 3 միկրոավտոբուսային երթուղիները սպասարկելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթը:

1) <<Մանթաշի Հովիտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գյումրի-Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկման համար մրցույթի մասնակցության հայտով նշված միկրոավտոբուսները սահմանված ժամկետում ընկերությունը ներկայացրել է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացրեց միկրոավտոբուսների գնահատման մրցութային թերթիկները՝ գնահատված:

Բացվեց հայտատուի կողմից երթուղիների սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գնի փակ ծրարը:

2) <<Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղիները սպասարկելու համար մրցույթի մասնակցության հայտերով նշված միկրոավտոբուսները սահմանված ժամկետում ընկերությունը ներկայացրել է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացրեց միկրոավտոբուսների գնահատման մրցութային թերթիկները՝ գնահատված:

3) <<Երդեվեք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկելու համար մրցույթի մասնակցության հայտով նշված միկրոավտոբուսները սահմանված ժամկետում ընկերությունը ներկայացրել է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացրեց միկրոավտոբուսների գնահատման մրցութային թերթիկները՝ գնահատված:

Հանձնաժողովի նախագահ Ս. Պետրոսյանը առաջարկեց՝

1) Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 45-րդ և 49-րդ կետի պահանջներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2016 թվականի մարտի 11-ին կայացած Գյումրի-Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/ ներմարզային երթուղու սպասարկման մրցույթում հաղթող ճանաչել <<Մանթաշի Հովիտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

2) Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 41-րդ, 42-րդ և 49-րդ կետերի պահանջներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2016 թվականի մարտի 11-ին կայացած Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման մրցույթում հաղթողներ չճանաչել:

Կազմակերպության անվանումը	Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/		
	ավտոմեքենայի		միջին գումարային միավորները
	մակնիշը	համարանիշը	
<< Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ԳԱԶ - 322132-288	558SU14	57.43
	ԳԱԶ - 322132	559SU14	63.29
Կազմակերպության անվանումը	Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/		
	ավտոմեքենայի		միջին գումարային միավորները
	մակնիշը	համարանիշը	
<< Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ԳԱԶ - 322132-288	179LS47	48.43
	ԳԱԶ - 322132-288	178LS47	63.14
Կազմակերպության անվանումը	Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/		
	ավտոմեքենայի		միջին գումարային միավորները
	մակնիշը	համարանիշը	
<< Երդեվեք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ԳԱԶ - 32213	107OC61	91.14
	ԳԱԶ - 322132	261SO45	49.57

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2016 թվականի մարտի 11-ին կայացած ներմարզային երթուղիների սպասարկման մրցույթում.

ա) Գյումրի-Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման մրցույթում հաղթող ճանաչել <<Մանթաշի Հովիտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը երթուղին հետևյալ միկրոավտոբուսներով սպասարկելու համար:

Կազմակերպության անվանումը	Մրցույթում Գյումրի Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/ միկրոավտոբուսային երթուղին շահել է՝						Փոխադրման գինը /դրամ/
	ավտոմեքենայի տիպը	վարորդի անուն ազգանունը	ավտոմեքենայի		միջին գոտեմարային միավորները	ընդհանուր միավորները	
			մակնիշը	համարանիշը			
<< Մանթաշի Հովիտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	միկրոավտոբուս	Ռաֆիկ Բաղդասարյան	ԳԱԶ - 322132	505SU14	76.43	95.14	Գյումրի-Սպանդարյան-300դր. Գյումրի-Արևշատ-300դր. Գյումրի-Մեծ Մանթաշ-350դր. Գյումրի-Փոքր Մանթաշ-350դր. Սպանդարյան-Արևշատ-100դր. Սպանդարյան-Մեծ Մանթաշ-100դր. Սպանդարյան-Փոքր Մանթաշ-100դր. Արևշատ-Մեծ Մանթաշ-100դր. Արևշատ-Փոքր Մանթաշ-100դր. Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ-100դր.
	միկրոավտոբուս	Սամվել Վարդերեսյան	ԳԱԶ - 322132	507SU14	73.86		

Հաշվի առնելով, որ <<Մանթաշի Հովիտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գյումրի-Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկելու համար մրցույթի գնահատման արդյունքում միկրոավտոբուսները ստացել են 70-ից ավել ընդհանուր միավոր և մրցույթին ներկայացված միկրոավտոբուսները հանդիսանում է <<Մանթաշի Հովիտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը, ուստի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 54-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի Գյումրի-Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետ սահմանել չորս տարի՝ 2016 թվականի ապրիլի 12-ից մինչև 2020 թվականի ապրիլի 12-ը:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

բ) Հաշվի առնելով, որ Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման մրցույթում հաղթողներ չեն ճանաչվել և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 60-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի պահանջներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2016 թվականի մարտի 11-ին կայացած մրցույթը Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման մասով հայտարարվել է չկայացած և հայտարարել նոր մրցույթ:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

3) Քանի որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով, ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2016 թվականի մարտի 11-ին կայացած մրցույթը Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման մասով հայտարարվել է չկայացած, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-րդ ենթակետի պահանջներով մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը թույլատրել <<Լիլիթ Մարիամ>> և <<Երդեվեք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին ժամանակավորապես իրականացնել Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ/N07-047/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկումը:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

3. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 10-րդ ենթակետի, սույն արձանագրությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը:

Արցախյան հանձնաժողովի նախագահ՝ Ս. Պետրոսյան

նախագահի տեղակալ՝ Վ. Հարությունյան

անդամներ՝ Տ. Ղարիբյան

Ա. Մարգարյան

Ա. Անտիկյան

Ա. Մուրադյան

քարտուղար՝ Հ. Խնձրցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ * ԴԻՍԵՑՈՒՍՏԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ